Արձանագրություն N 2

<<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/11>> ծածկագրով ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի թիվ 5 մանկապարտեզի վերակառուցման նախագծային աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

27.07.2017թ
ժամը 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ջանջուղազյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Եղիազարյան/ գնահատող /
Ա. Գրիգորյան /գնահատող/
Ֆ. Սարգսյան / բացող /
Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան
Բացակայում էր
Հանձնաժողովի անդամ՝ Գ. Գևորգյան/ բացող /

1. Տեղեկություններ <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/11>> ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված հայտերի բացման մասին

(Ա. Ջանջուղազյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով 2017 թվականի հուլիսի 4-ին ժամը 11:00:

բ) Գնման առարկայի նախահաշվային գինը կազմում է 7 000 000 (յոթ միլիոն) ՀՀ դրամ:

գ) Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

Հ/Հ	*Մասնակցի անվանումը*	*Հասցե*	*Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)*	*ԱԱՀ*	*Առաջարկված ընդհանուր գինը*
1	<<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ	ք. Վանաձոր, Վարդանանց 23/159	1 980 000	-	1 980 000
2	<<Հազարաշեն>> ՍՊԸ	ք. Երևան, Կոմիտաս պող. 54Վ	2 000 000	-	2 000 000
3	<<ԱՐԽԻ-ՏՈՒՐ>> ՍՊԸ	ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Շահազիզի 35	2 000 000	-	2 000 000

4	<<ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ>> ՍՊԸ	ք. Երևան, Նոր Նորք Բագրևանդի փ. 1/3, բն. 39	2 400 000	-	2 400 000
5	<<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ	ք. Երևան, Բաղյան 1-ին նրբ. 6/6	2 450 000	-	2 450 000
6	<<Շին Նախագիծ>> ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ, գ. Բուրաստան, Չարենցի 2	2 800 000	-	2 800 000
7	<<Սարգիս և Մարիաննա>> ՍՊԸ	ք. Եղվարդ, Նար Դոսի փողոց, 28ա	3 500 000	-	3 500 000
8	<<ԳԱԳՆԱԽՇԻՆ>> ՍՊԸ	ք. Հրազդան, Միկրոշրջան 209/14	6 000 000	-	6 000 000

դ) Ներկայացված հայտերի ուսումնասիրության արդյունքում առաջացել է փաստաթղթերում էլեկտրոնային թվային ստորագրության հետ կապված պարզաբանում ստանալու անհրաժեշտություն, որով պայմանավորված՝ հանձնաժողովը որոշել է համապատասխան գրությամբ դիմել լիազոր մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, և կասեցնել նիստը մինչև պարզաբանում ստանալը:

ե) ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի 03.07.2017թ. N 02/27.1/3939-17 գրությանն ի պատասխան ստացվել է ՀՀ ֆինանսների նախարարության 12.07.2017թ. 04/27-1/12633-17 գրությունը: Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված պարզաբանումը՝ հանձնաժողովը որոշում է.

1. <<ԳԱԳՆԱԽՇԻՆ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել, քանի որ հայտի ապահովման գումարը փոքր է հրավերով պահանջվող չափից (հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսի փոխարեն ներկայացվել է երկու տոկոսը):

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

2. Տեղեկություններ <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/11>> ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների մասին

(Ա. Ջանջուղազյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով հայտերը գնահատվել են հետևյալ հերթականությամբ և հետևյալ կերպ.

Մրցույթում զբաղեցրած տեղը	Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
1	<<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ	բավարար
2	<<Հազարաշեն>> ՍՊԸ	բավարար
2	<<ԱՐԽԻ-ՏՈՒՐ>> ՍՊԸ	բավարար
3	<<ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ>> ՍՊԸ	բավարար
4	<<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ	բավարար
5	<<Շին Նախագիծ>> ՍՊԸ	բավարար
6	<<Սարգիս և Մարիաննա>> ՍՊԸ	բավարար
7	<<ԳԱԳՆԱԽՇԻՆ>> ՍՊԸ	անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 դեմ - 0:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովը որոշեց

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած <<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

- Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած <<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ-ին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդ տեղ զբաղեցնող մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

4. <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/11>> ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2017 թվականի օգոստոսի 3-ին ժամը 15:00-ին

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ա. Ջանջուղազյան

Անդամ՝ ---------- Ռ. Եղիազարյան

---------- Ա. Գրիգորյան

---------- Ֆ. Սարգսյան

Արձանագրությունը կազմեց
Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան